



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«26» հոկտեմբեր 2022թ.

### ՀՐԱՄԱՆ N 524-շհ

«ՎԻՉ ԷՅՐ ԱՐՈՒ ԴԱՔԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Աբու-Դաբի» ավիաընկերության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի հայտը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Աբու Դաբի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով՝ 2022 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2023 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով չվերթերը համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մարտի 25-ի N 126-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով իրականացվող չվերթերի շարունակությունը (ԻԱՏԱ) 2022-2023 թվականների ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2022 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2023 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի

Հանրատության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտե նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մարտի 25-ի N 126-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

10/26/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 191/2022  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕՂԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕՂԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 191/2022  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Վիզզ Էյր Աբու-Դաբի» ՍՊԸ "Wizz Air Abu Dhabi" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A321
Հաճախականությունը Frequency	շաբաթական 4 չվերթ 4 flights per week
Երթուղին Air route	Աբու-Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու-Դաբի/OMAA/ Abu Dhabi/OMAA/-Yerevan/UDYZ/-Abu Dhabi/OMAA/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	30/10/2022 մինչև 25/03/2023 30/10/2022 till 25/03/2023

10/26/2022

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
CHAIR OF CIVIL  
AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266



26.10.2022

(տալու ամսաթիվը)  
(date of issue)